ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը** ՝ Վահե Գրիգորյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ կառավարությանն ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի տեղակալ
3. **Գործուղման վայրը/ժամկետը՝** Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2025 թ. մարտի 16-ից 28-ը
4. **Հրավիրող կողմը՝** Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալություն (ԱԷՄԳ)
5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցել «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային հաշվետվությունների 8-րդ դիտարկման աշխատանքային հանդիպմանը
6. **Քննարկված թեմաները – Հանդիպման ընթացքում քննարկվել են.**
   - «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում կազմված ՀՀ ազգային հաշվետվությունը:
   - «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված հարցերը և պատասխանները:
   - 4-րդ խմբում ներառված անդամ երկրների ազգային հաշվետվությունները:
   - Նման միջուկային ծրագիր ունեցող երկրներում աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին մոտեցումները :
7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր**

   Իմ կողմից ներկայացվել է՝ «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում կազմված ՀՀ ազգային հաշվետվությունը :

   Ներկայացվեցին նախորդ հանդիպման ընթացքում արձանագրված մարտահրավերների և առաջարկությունների ուղղությամբ ՀՀ կողմից իրականացված աշխատանքները: Ներկայացվեց նաև ՀՀ փորձը նախորդ հանդիպման ընթացքում «համապարփակ խնդիրներ» ճանաչված հարցերի ուղղությամբ:

   Ազգային զեկույցի և հաշվետվության ներկայացման, ինչպես նաև քննարկումների արդյունքում, նախորդ հանդիպման ընթացքում արձանագրված

4 մարտահրավերներից 3-ը ճանաչվեց կատարված, իսկ մեկ մարտահրավեր՝ (ջանքերի գործադրում ՀԱԷԿ շահագործումից հանման հատուկ ֆոնդի և նրա համալրման ծավալները մեծացնելու ուղղությամբ, որը համարժեք կլինի շահագործումից հանման աշխատանքների ծավալներին) գտնվում է իրականացման փուլում:
Քննարկումների արդյունքում ՀՀ համար արձանագրվեց 2 նոր մարտահրավեր"

- Ռադիոակտիվ թափոնների ազգային օպերատորի ստեղծում,
- Ռադիոքիմիական ռեֆերենսային լաբորատորիայի ստեղծում:

Հանդիպման արդյունքներով արձանագրվել է նաև ՀՀ կողմից 2 «Լավ գործունեություն» (Good Performance).

- Միջոցառումների Իրականացում՝ ուղղված կարգավորող մարմնի որակյալ անձնակազմով համալրման ուղղությամբ, աշխատանքի պայմանների և խրախուսման մեխանիզմների ներդրմամբ:
- ՄՌԱԳԿ և գերմանիայի կառավարության համագործակցությամբ «պատմական թափոնների» տեղեկատվության վերհանում և թվայնացում:

4-րդ խմբի անդամ երկրների, այդ թվում նաև ՀՀ, ազգային հաշվետվությունների և ազգային ելույթների քննարկման արդյունքները ամփոփված են «Country Group 4 Rapporteur's Written Report» փաստաթղթում (կցվում է):

Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային հաշվետվությունների 8-րդ դիտարկման աշխատանքային հանդիպման արդյունքները ամփոփելով արձանագրվել է 21 «Լավագույն փորձ» (Good Practice), որոնցից առանձնապես հետաքրքիր է ռադիոակտիվ թափոնների նվազեցմանն ուղղված տեխնոլոգիաների կիրառումը, որոնց կիրառման արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությունը առաջարկվեց ներկայացնել հաջորդ հանդիպման ընթացքում:
Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային հաշվետվությունների 8-րդ դիտարկման աշխատանքային հանդիպման արդյունքները ամփոփելով արձանագրվել է 14 «համապարփակ խնդիրներ», որոնցից ընտրվեցին հետևյալ խնդիրները, որոնք հաջորդ ցիկլում անդամ երկրները պետք է իրենց ազգային զեկույցներում լրացուցիչ ներկայացնեն"

- Բնական և տեխնածին աղետներին արձագանքում,

- Աշխատած միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կայուն կառավարման համար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև գիտելիքների կառավարում,
- Նոր տեխնոլոգիաներից ռադիոակտիվ թափոնների հոսքերի անվտանգ կառավարում,
- Աշխատած միջուկային վառելիքի, ռադիոակտիվ թափոնների և չօգտագործվող փակ ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման վերաբերյալ հանրության իրազեկում,
- Երկարաժամկետ պահեստարաններում աշխատած միջուկային վառելիքի, ռադիոակտիվ թափոնների և չօգտագործվող փակ ռադիոակտիվ թափոնների վիճակների հսկողությունը

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային հաշվետվությունների 8-րդ դիտարկման աշխատանքային հանդիպման արդյունքները ամփոփվել են «Ամփոփ հաշվետվությունում», որը կցվում է:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձեւը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ներկայացված մարտահրավերները վերաբերում են ինչպես ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին, այնպես էլ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ:

Առաջարկում եմ ուսումնասիրել Սլովակիայի փորձը ռադիոակտիվ թափոնների ազգային օպերատորի ստեղծման, «աղտոտողն է վճարում» սկզբունքի ներդրման, վերամշակման տեխնոլոգիաների ներդրման և մերձմակերեսային գերեզմանոցի կառուցման առաջավոր փորձը:

Առաջարկում եմ ուսումնասիրել ռադիոակտիվ թափոնների կառավարման Վրաստանի, ինչպես նաև այլ փոքր երկրների փորձը, որտեղ ազգային և միջազգային ծրագրերի աջակցության շնորհիվ կառուցվել են նոր պահեստարաններ և մերձմակերեսային գերեզմանոցներ:

Վահե Գրիգորյան
02/04/2025թ.